

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ


ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ

Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԲՐԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ (Հասպոպսի)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՍՏՈՒ ՇԱԲԱԹ
Տարեկան, ողջ դահլիս. 60
Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐ
Տարեկան Ֆրանկ 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԻԿ Ե
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր:

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՅԸ

Փառանակէ մը ի վեր արտասահմանի մէջ սկսած են չը յիշել Օրմանեանի անունը պատարագի միջոցին. վերջերս գաղափարի նոյն անսակ հասանք մ'ալ երեցած է Եգիպտոսի մէջ. Աղեքսանդրիայէ յետոյ Գահիրէի ժողովուրդն ալ կը փափաքի որ չի յիշուի Պատրիարք մը՝ որ — թողունք ներկային — գեռ մտաւոր անցեալի մը մէջ տըխուր յիշատակներով համակած է հայը:

Ժողովուրդեան կողմանէ արտայայտուած այս փափաքին պաշտօնական գոյն մը տալու համար՝ պաշտօնական շրջանակի մէջ իրեն տրուած խորհրդի մը համաձայն անոր քաղաքացիները կը հաւաքուին և կը ներկայացուին Ազգ. Ժողովոյ: Իմացածիս նայելով՝ ժողովը անձա՛ն ընթացքով մը կը վերաբերուի յանուն ժողովուրդեան ներկայացող պատուիրակաց հետ: Ուրիշ առթիւ մ'ալ ժողովականք ոմանք կ'ուզեն նոյն իսկ ուրանալ Եգիպտոսի մէջ հայ ժողովուրդի մը գոյութիւնը, կամ ուրիշ բառով՝ ըստ իւրեանց կարծեաց՝ հայ ժողովուրդը բաւել կ'իմանան եղբր տեղւոյս հայ շրջերը: Պատուարժան Ազգ. Ժողովոյ նկատմամբ այս ըսուածներուն չպիտի ուզէի հաւատք ընծայել՝ եթէ տեղի չ'ունենային վերջերս սխուր գէպքեր՝ որք ըսուածները հաստատելու գոյնը ունին կարծես:

Մէկէ աւելի մտածելիք կէտեր կայ:

Պատրիարքի մը անունը յիշելը կամ չի յիշելը ինքնին ո՛ր և է կարեւորութենէ զուրկ է. բայց երբ կը տեսնուի թէ ամբողջ հայ գաղութի մը գոյութիւնը կ'ուզեն ուրանալ, կամ թէ աւելի ճիշտը՝ զայն կը նկատեն իբրև զանցառելի քանակ մը (quantité négligeable.) երբ մի քանի շրջերու կամքը կ'ուզեն ամբողջ ժողովուրդեան կամքին տեղը դնել, ահա ինչ որ աւագ կարեւորութիւն մը ունի զոր կարելի չէ անտեսել եթէ ուզուի բարձր պահել հայ անհատի ազգային անկապտելի իրաւունքները: Կ'ուզեն անտեսել ժողովուրդին գոյութիւնը ու կամքը. բայց կը հարցունեմ իրենց՝ թէ ո՞ւր կ'ընտան իրենց անհատական իրաւունքները, մի՞ գուցէ իրենց հայրերէն ժառանգած լինին զայն՝ ինչպէս մարդ կը ժառանգէ հարստութիւն մը: Ժողովուրդին

քուէն է — ոչ այլ ինչ — որ հրաւիրած է զիրենք վարելու ժողովուրդին ղեկը en bon père de famille, ա՛յն ժողովուրդին՝ որոյ իրաւանցը գոյութեանը վերայ տարակոյս կը յայտնուի այսօր: Պէտք է ըսեմ թէ երբ ժողովուրդ մը կը տեսնէ թէ իւր քուէն սխալ տուած է՝ իրազօր իրաւունքը ունի ետ պահանջելու տուած պաշտօնը՝ աւելի նպատակայարմար անձանց յանձնելու համար զայն: Ժողովուրդը չէ որ կը յարմարցուի այս կամ այն օրէնքին, այլ օրէնքն է՝ որ կը սրուի այս կամ այն ժողովուրդեան, այնպէս որ օրէնքի մը քաղաքացի իրաւունք տալէ առաջ պէտք է աչքի առաջ ունենալ նոյն ժողովուրդեան աւանդութիւնները, բարքըն ու սովորոյթ. եթէ ազգ. գործին վարիչները կ'ուզեն միապետական օրէնքով վարել սահմանադրական ժողովուրդ մը, այդ անկարելի է: Այսու հանդերձ կրնայ պատահիլ որ արդի ժողովականք շատ պատուական մարդիկ լինին և ամէն կերպիւր լուսարամադրութիւններ ունենան ազգին օգտակար լինելու համար. բայց լաւ տրամադրութիւնք ինքնին անզօր են երբ կ'անգիտանան թէ ո՞չք են ճշմարիտ ուղիները. մարդ կրնայ իւր մէկ արարքով վնասել ընդհանրութեան շահուցը՝ կարծելով մի և նոյն ատեն թէ օգտակար եղած էր ատու:

Ժողովուրդեան զանազան խաւերու բազմախումբ՝ որոնք յառաջ եկած են շահուց և սկզբանց տարբերութենէն՝ գրեթէ ընդ միշտ տեղի ունեցած է ամէն դարու և ամէն ժողովուրդեան մէջ քիչ թէ շատ ուժգնութեամբ:

Հռովմայի մէջ ժողովուրդեան երեք դասակարգ կար, ազնուական, պաշտպանաւոր և խուժանը կամ ժողովուրդը (les patriciens, les clients et la plèbe). ամբողջ երկրին կառավարութիւնը ազնուականաց ձեռաց մէջն էր, clients-ները կը գտնուէին ազնուականաց պաշտպանութեանը տակ, և pour ainsi dire անոնց անձին մէջ իրենց անհատականութիւնը կը կորսուէր. իսկ վերջինք — ժողովուրդեան ա՛յն մեծագոյն մասը՝ որ կը կալմէր կայսրութիւնը և որոյ վերայ կը ծանրանար ամէն հոգ և տարապարհակ աշխատութիւն — ո և է գեր չ'ունէր երկրին վարչութեանը մէջ. բայց ի՞նչ եղաւ հետեանքը. դարերու ընթացքին մէջ ընդ միշտ պահանջելով իւր իրաւունքները՝ վերջապէս

բռնի ձեռք անցուց զանոնք l'égalité dans l'ordre public comme dans l'ordre privé. մանրամասնութեանց մէջ մանկը երկար պիտի լինի:

Բայց մինչև Հռովմայ կայսրութեան Պատմութեանը գիմելու հարկ չկայ ցուցնելու համար թէ ժողովուրդեան կամքը երկրին կամքը եղած է: Ի՞նչ էր պատճառը գաղղիական յեղափոխութեան. կղերը և ազնուապետութիւնը իրենց ձեռացը մէջ կեդրոնացուցած էին ամէն ինչ, և ժողովուրդը ո՛ր և է ձայն չունէր, թէպէտ երկրին մեծագոյն բեռը ինք կը կրէր:

Ժողովուրդը Ժ. Ժ. Բուսոյի և Մօնթէսքիէ-յի հրուածոց վերայ, թօթափեց վերջապէս իրեն վերայ ծանրացող լուծը. 1789, 26 օգոստոսին հրատարակուեցաւ Déclaration des droits de l'homme et du citoyen, որոյ մէջ գերիշխանութիւնը կը վերաբերի ազգին անգամայն:

Անգլիա ալ ունեցած է իւր գաղափարաց յեղաշրջումը, միայն տարբեր ձևի տակ և այսօր Անգլիոյ թագուհին en fait նուազ ազդեցութիւն ունի քան թէ Գաղղիոյ նախագահը, այնպէս որ օտար կառավարութեան մը ներկայացուցչին եթէ ունկընդրութիւն չնորհէ՝ պէտք է որ նախարարապետը ներկայ գտնուի:

Գալով մեզ Հայոցս. ի՞նչ էր 1860ի շարժումը, եթէ ոչ իւրաքանչիւր անհատի իրաւանց ճանաչումը — տեսակ մը պայքար էր ընդդէմ աւիրայից և միաբնակչիւնեռութեան վարչութեանց — այդ յեղաշրջումը տուն տուաւ Սահմանադրութեան: Ասկից 40 տարիներ առաջ ժողովուրդը բնականաբար շատ աւելի յետադէմ վիճակի մէջ էր, բայց հակառակ ատոր գիտցաւ և կրցաւ իւր ձայնը լսելի ընել տալ:

Այդ Սահմանադրութեան օրէնքներով է որ կը կառավարուի արտասահմանի հայութիւնն ալ: Ի՞նչպէս Սահմանադրութեան օրէնքներն ալ — ուրիշ օրինաց նման — փոփոխութիւններ կրելու են թակայ են — եթէ հարկ լինի — միջավայրին և ժամանակին պահանջմանց համեմատ, բայց ԱՄԷՆ ՊԱՐԱԳԱՅԻ մէջ անոր հիմնական սկզբունքները անփոփոխ մնալու են:

Համառօտակի ակնարկ մը ձգելէ վերջ
գարուց ընթացքին մէջէն՝ ժողովրդեան ի-
րաւանցը վերայ, գանք այժմ մեր խնդրոյն՝
որ կարելի է «օրուան հարցը» կոչել, «հարց»
մը, որ այժմէութիւն ստացած է:

Օրուան հարցը «յիշուի» թէ չի յիշուի՝
հարցն է. բայց այս հարցին քօղին տակ
կայ մի ուրիշ հարց շատ աւելի կարեւոր.
այսինքն՝ թէ ի՞նչ բան կրնայ արգարա-
յունել վարիչ մարմնայն վերջերս բռնած ըն-
թացքը:

Յայտնի է թէ վարիչ մարմինը ժողո-
վրդեան քուէովն է որ հրաւիրուած
է այդ պաշտօնին և ժողովրդեան քուէն
ցոյց կուտայ միանգամայն գործելու ա՛յն
չըջանալի՝ ուսկից գուրս չի կրնար ելլել
ժողովրդ ժողովուրդը ինք չի կրնար գառա-
փետել այս ու այն իւր կարծիքին խորհե-
լու կերպին համար: Այժմ, կը հարցունեմ,
վարիչ մարմինը՝ որ պարզապէս ժողովուր-
դը կը ներկայացունէ՝ կրնա՞յ միթէ աւելի
յառաջ երթալ իւր պաշտօնին կիրարկմանը
մէջ և բաւական չտեսլով անգոհացուցիչ
պատասխան մը տայը արուած ստորագրու-
թեանց՝ կրնա՞յ նոյն իսկ ձեռքակալել առ
մեր արեւակիցները:

Եթէ կրնայ — ո՞վ տուած է իրեն այդ
բացառիկ իշխանութիւնը — բնականաբար
ժողովուրդը չէ՛ քանի որ ինք չունի այդ
տեսակ իշխանութիւն մը և եթէ չէ՛մ որ-
խալիլ՝ ժողովը ուրիշ մէկէն ալ իշխանու-
թիւն ստայած չէ:

Եթէ չի կրնար, այդ կը նշանակէ թէ
իւր պաշտօնին գիտակցութիւնը չունի, ու-
րեմն պէտք է թողու՝ աւելի կարողներու
յանձնուելու համար լայն, հակառակ պա-
րագային ժողովրդեան կը մնայ յարգել
տալ իւր ազգային իրաւունքները ամէն ՕՐԻ-
ՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ:

ՏԻԱՐ Մ. ՏԱՄԱՏԵԱՆԻ ԶԱՌԸ

(Շար. նախորդ քիւն և վերջ)

Իր վան մեկնելէն քիչ վերջը քննիչները հա-
սան Բաղէշ, բողոքող ժողովրդի հայ և թուրք
ներկայացուցիչները յատուկ կոչմանգրով Բաղէշ
հրահրուեցան, բացին. ժողովուրդը մեծ բազմու-
թեամբ զանոնք ճամբայ դնելով՝ անգամ մ'ալ
ցոյց տուաւ թէ իր դասին մէջ անյողգող կեցած
է: Փացին, ու, թիբեւս առաջին անգամը ըլլալով
թուրքոյ մէջ արգարութիւնը յաղթանակեց: Բա-
ղէշի վալին, Մշոյ Միւթեարըքը, Մէքթուպէին
միաժամանակ պաշտօնանկ եղան և անխառնակ
կերպով դիտելով հեռացան Մուշէն ու Բաղէշէն.
Թալիպ էֆէնտին, Թաքոս էֆէնտին ու վարդան
աղան վարկաբեկ ու շնորհազուրկ եղան. Արխ-
սակէն Գերձակեան չեպիկոպտան ալ, որ Ալէքսի-
ճեանի մեկնումէն վերջ պահ մը երազեց Ս. Կա-
րապետէն Մուշ իջնել և թափուր մնացած այդ
հասութարքի աթոռն ալ գրաւել, Մշոյ գաշտի 72
հայ քահանաներու ստորագրութեամբ իրեն դէմ
Պատրիարքարան քաշուած հեռագրի մը վրայ,
չունէր Տիպրանակերտ առաւ, անկէ ալ Պաղատա
երթալով՝ պատրիարքական անօրինութեամբ Սա-
լիս փաշային յաջորդեց հայասէր միւթէարըք մը
որուն օրովը աւազակները դէմ ժամանակաւորա-
պէս իրենց որջերը մտան:

Հայ և թուրք պատգամաւորները այս ամէն
յաջողութիւններէ վերջ Բաղէշէն դարձան յաղ-
թական. ժողովուրդը անոնց իշխանավայել ընդու-
նելութիւն ըրաւ: Այս կերպով Մուշ խաղաղեցաւ
և ժամանակ մը ազատ չունշ քաշեց:

Այս նշանաւոր անցքերուն ժամանակ ալ, ինչ-
պէս տեսնուեցաւ, Ալէքսիճեան արքայան անձնա-
պէս միասուած ու զոհուած էր. ու ամէն բանէ
աւելի իր նախածնութեան ու իր ջանքերուն
արդիւնքը եղող այս յաղթութիւնը չկրցաւ ու-
ջունել իր սիրած Մուշին մէջ, որմէ ա՛լ այս ան-
գամ անդարձ հեռացած էր: Այս կերպով նորէն իր
անձին վրայ կը ճշգրտուէր մեծ նշանաբանը. հո-
վիւ քաջ դիւ զանձն իւր ի վերայ ոչխարաց:

Բայց Մշեցիին չմոռցաւ իր արի առաջնորդին
ծառայութիւնները, և Ալէքսիճեանի անունը և
բախտագիտութեամբ պիտի յիշուի Մշեցիներու
ապագայ սերունդներէն: Ու Մշոյ Տաճիկները՝ ի-
րենց բոլոր հայաստեցութեամբ հանդերձ՝ ակամայ
յարգանք և ակնածանք մը պիտի ունենան դէպ
ի իրենց հարեւակից այն ազգը, որ Ալէքսիճեան
Սրբազանի նման առաջնորդ մ'է ունեցած:

Բայց Ալէքսիճեան Սրբազան միայն կառա-
վարական զեղծումներուն դէմ բռնած կորով ըն-
թացքովը չէ՛ նշանաւոր հանդիսացած. բոլորովին
տարբեր կարգի ընկերական խնդիրներու մէջ ալ
իւր կարուկ և գործնական անօրինութիւններու
վը շատերու սիրտինք և միտքարութիւն պատ-
ճառած է: Ամուսնական խնդիրներու մէջ զիտ-
ցած է օրէնքի աննկողութիւնը մեղմացնել ա՛յն-
տեղ, ուր անոր տառական գործադրութեան մէջ
մեծագոյն անպատահելիքներ ու չարքներ նը-
կատած է: Այս կէտի վերաբերմամբ ալ՝ ինք ա-
ւելի առաջ որդուած է ժամանակակից լայն հայ-
եացներէ և իրական կեանքի պահանջներէ քան
այնպիսի վերացական նկատողութիւններէ և օ-
րինական արամագրութիւններէ, որոնց իբր անշե-
ղելի սկզբունք պիտի հետեւէր առօրեայ կեանքին
անսեղեակ և վանքի չորս պատերէն գուրս չե-
լած աւանդամուկ կրօնաւոր մը: Այսպէս Ալէքսի-
ճեան Սրբազան 1886ին Պուլանք գաւառակը կա-
տարած իր հովուական այցելութեան միջոցին,
բաւական թուով անյարմար ամուսնութիւններ
լուծեց, և 8—10 տարիներ պանդխտութեան մէջ
սպրող և հարեւինք չվերադարձողներու հէգ և
անօգնական կիներուն արտօնութիւն տուաւ ա-
մուսնանալու, և շատ մը գայթակղութիւններ,
որոնք եկեղեցական օրէնքի նեղահայեաց մեկնու-
թեամբ պիտի շարունակուէին, մէջտեղէն վեր-
ցուց ու դարձանց: Ու այս կերպով սէրը, ու-
րախտութիւնը և երջանկութիւնը վերահաստատ-
ուեցան շատ մը ընտանիքներու մէջ:

Ալէքսիճեան Սրբազանի վանայ մէջ վարած
պատրիարքական փոխանորդութեան վերջին պաշ-
տօնն ալ նոյնպէս փոթորկալից և կարճատեւ և-
զաւ:

Վանայ մէջ իր պաշտօնավարութեան միջո-
ցին էր, որ տեղական կառավարութիւնը կասկա-
ծելով Հայոց մէջ յեղափոխական շարժումի մը
գոյութեան մասին և ենթացիկով որ անպիտա-
կան փոխ-հիւ-պատասարանք ձեռքի տակէ կը քա-
ջալերէ այդ կարծեցեալ շարժումը, «ազգային
գաղտնիք»ներուն վերահաս ըլլալու համար դիմեց
վայրենի և դժոխային միջոցի մը:

Նշան Շիրվանեան անուն հայ մը, որ անպ-
լիական հիւպատոսարանի թարգման էր, դիշերը
Ալեքսեանի ծառու զիններէն տուն գացած ժամա-
նակը՝ յանկարծ չորս դիմակաւոր անձերէ կը շըր-
ջապատուի, որոնք զինքը կ'առեւանդեն ու լեռը
կը տանին, աչքերը կապելով՝ որպէս զի չգիտնայ
թէ ո՛ր կերթիւն և ի՞նչ մարդերու հետ գործ
ունի: Քարայրի մը մէջ կը փակեն խնդճ մարդը
և երեք օր անօթի ծարաւ պահելէ վերջ՝ այդ
վիճակի մէջ զինքը խիստ հարցաքննութեան կ'են-
թարկին Հայոց կարծեցեալ «ազգային գաղտնիք»-
ներու մասին, միանգամայն ծեծելով և մահուան
սպանալիքներ ընելով: Հիւպատոսը իր թարգ-
մանի անյայտացման վրայ կուսակալէն բացատ-
րութիւն կը պահանջէ՝ այս առեւանդումին հա-
մար զինք անձամբ պատասխանատու ճանչնալն
յայտարարելով:

Կուսակալը հիւպատոսին առջև գործը աւա-
ղակներու կը վերադրէ և ապին անզին ոտտի-
կաններ կը դրկէ, որոնք սուտ փնտառութեան
վերջ՝ դատարկ ձեռքով ետ կը դառնան Վերջա-
պէս երեք օր վերջը, նոյնպէս գիշերով, կիսա-

մերկ և կիսամեռ վիճակի մէջ երեւան կ'ենէ
Շիրվանեանը և հաղիւ ինքզինքը անպի. հիւպա-
տոսարանը կը ձգէ, ուր հիւանդ կը պառկի: Հիւ-
պատոսը կը հեռագրէ եղելութիւնը Կ. Պօլսոյ անպ-
լիական զեսպանին: Ասոր վրայ կուսակալը ինք-
զինքը պատասխանատուութեան ազատելու հա-
մար հանրագիր մը պատրաստել կուտայ, որով իբր
սուտ կը հերքուի Շիրվանեանի դէպքը, կուսա-
կալի գործերու մասին գոհունակութիւն կը յայտ-
նուի և Շիրվանեան ու անգլիական հիւպատո-
սարանը մասնաւոր կ'ըլլուին, առաջինը՝ իբր իւր-
ովարար, իսկ երկրորդը — հիւպատոսարանը —
իբր աւելորդ հաստատութիւն մը, ինչդրելով այդ
հիւպատոսութեան ջնջումը: Քաղաքին աղաներէն
ոմանք այդ թուղթը կ'ստորագրեն և հարիւրի
չափ միամիտ հայերու ալ ստորագրել կուտան
հաւատացնելով անոնց թէ բանտարկեալներու ա-
զատութիւնը ինչորոգ ազրսագիր մ'է այն: Հան-
րագիրը Ալէքսիճեան Սրբազանին ալ կը բերին որ
ստորագրէ. բայց նա խտուր ևր նշաւակէ անոնց
վատութիւնը ու կը վճռէ իր ներկայութեան:

Յաջորդ օրը ժողովուրդը այս գործուածքները
խմանալով ոտքի կ'ենէ. իրեն ներկայացող պատ-
գամաւորութեան մը Ալէքսիճեան Սրբազան բացէ
ի բայ կը յայտնէ այդպիսի հանրագրի մը գոյու-
թիւնը: Անմիջապէս հակառակ հանրագրի մը կը
պատրաստուի, որուն մէջ բուն եղելութիւնները
բողոքով կ'արձանագրուին, պախարակելով տե-
ղական կառավարութեան ընթացքը և պահան-
ջելով վանայ մէջ անգլիական հիւպատոսարանին
պահպանումը: Այս բողոքի հանրագրութիւնը կը
ծածկուի հաղարաւոր ստորագրութիւններով ու կը
հեռագրուի Դրան: Ժողովուրդի այս բողոքի ցոյցը
երկու օր կը տեւէ և սոսկալի իրարանցում կը
պատճառէ կառավարական շրջանակներուն մէջ:
Կուսակալը երկու անգամ մարդ կը դրկէ Ալէքսի-
ճեան Սրբազանին և զանի իր ներկայութեան կը
կանչէ բացատրութիւն պահանջելու ժողովուրդի
այս յուղումին մասին: Երկու անգամին ալ Սա-
լէքսիճեան կը մերժէ երթալ անպատասխան քօլ:
Երրորդ անգամին կուսակալը մէկ քանի բարձ-
րաստիճան շաշտօնատարներ կը դրկէ, որոնք շատ
քաղաքավարութեամբ կը խնդրեն Սրբազանէն որ
հաճի կուսակալին քով հրամայել, կացութեան
վրայ միասին խորհրդակցելու և ժողովուրդը
հանդարտեցնող միջոցներ անօրինելու համար: Այս
անգամ Ալէքսիճեան Սրբազան կը զիջանի կ'եր-
թայ:

- Կուսակալը կը հարցնէ.
— Ժողովուրդը ինչո՞ւ այսպէս գրգռուեց է:
Գրիգորիս Սրբազան կը պատասխանէ.
— Այդ բանը ե՛ս ձեզի պէտք էի հարցնել:
Կուսակալը կ'աւելցնէ.
— Այս ցոյցին պատասխանատու ձե՛զ կը նը-
կատեմ:

Գրիգորիս Սրբազան ոտքի կ'ենէ ու անկղ
ձայնով կը պոռայ կուսակալի երեսին.

— Այս բոլոր խտուրութիւններուն միակ պա-
տասխանատուն զո՞նք ևս, որ քու անխոհեմ և
զրգոխ արարքներովը գործերը այս վիճակին հա-
սուցիր: — Ու կը մեկնի: Ի զո՛ր կուսակալը և
բարձր պաշտօնատարներ կը ջանան ողոքել ա-
ռիւծասիրտ առաջնորդը. կը թողու կը մեկնի:

Կուսակալը այս միջադէպին հետեւանքներէն
վախնալով՝ անմիջապէս Գրիգորիս Սրբազանին
քով կը դրկէ բարձր պաշտօնատարներ, որոնք կու-
սակալին անուսովը իրմէ պաշտօնապէս ներողու-
րիւն կը խնդրեն:

Ժողովուրդը իր հանրագրութիւնը աւարտե-
լէն ու բողոքի հեռագիրները զարնելէն վերջը՝ կը
հանդարտի: Զերբակալութիւն տեղի չունենար:

Այս դէպքերէն քիչ ժամանակ վերջը Գրիգո-
րիս Սրբազան հեռագրի մ'ալ կ'ստանար Յարու-
թիւն Պատրիարքէն, որը զինք Պօլիս կը հրաւիրէր:
Գրիգորիս Սրբազան հողեւոր իշխանութեան չէր
կրնար անաստել. ուստի վաստակաւորներն ալ կը
մեկնի ու կ'երթայ Պօլիս ուր մնայ այլ ևս մինչ
չեւ իր մահուան օրը: Թէպէտեւ իր ազգային և
կրօնական պարտաճանաչութիւնը զինք կը կան-
չէր դէպ ի թափուր մնացած իր թեւը — դէպ ի իր
երախտեաց վայր Տարօնը գոր միշտ սիրեց, բայց
ա՛լ իրեն համար թոյլտուութիւն չկար Կ. Պօլսէն
մեկնելու:

Պօլսոյ մէջ Ալէքսանտր Բրազան գառազե- ղի մէջ փակուած առիւծ մէք, եւ որչափ որ այդ տեղ ալ վարեց ամենաբարձր պաշտօններ եւ կա- տարեց օգտաշատ գործեր, Մշտն ամբողջ կարողը կը քաշէր: Եւ վերջին անգամ ալ՝ կիրիլիոս վե- հագոյն ամբողջ գրկուելուն կամ աւելի ճիշդը՝ այդ ամբողջ իրմէ զրկուելուն ցա՛ւը ունենալով սրտին մէջ, փակեց իր աչիքը պարտաճանաչու- թեան այս նահատակը:

Ուրիմ, Հայեր, պատուէ՛ք միշտ յիշատա- կը այս մեծ մարդուն որ իր ամբողջ կեանքին օ- ղինակովը հաստատեց Քրիստոսի մեծ նշանաբանը. «Հովիւ քաջ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց»: Գիտնա՛նք յարգել, մեծարել, պաշտել ու ան- մահացնել մեր եկեղեցական ինչպէս աշխարհական մեծ դէմքերը, ինչպէս որ գիտնալու ենք արեւմուտ- ինէ մեր անարժան պետերն ու զեկալարիչներն ալ՝ վեղարուոր եւ անվեղար:

Միշտ մեր սրտերուն մէջ քանդակուած պա- հենք Ալէքսանտր Գրիգորիս Բրազանի փարեկի յիշատակը: Եւ թող անոր դամբարանը ներշնչա- րանք ըլլայ հայ եկեղեցականութեան:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Ա. Զ. Դ.

Վաղը կէս օրէ առաջ ժամը 9 1/2ին, Էօզպէթիյէի Ամերիկացոց մատրան մէջ Պատուելի Մ. Յ. Գնահեան պիտի քարոզէ կենԱՅ ԲԱԺԱԿԸ նիւթին վրայ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԼՈՒՐԵՐ

Քաղաքական ժողովը, Առաջնորդական Փոխ-Տնօրէնական ստորագրութիւնը կրող մասնաւոր նամակներով, իր երեկի նստին խորհրդակցութեան հրաւիրած էր ասկէ ա- ռաջ ծանօթ հանրագիրը ներկայացնող չորս պատգամաւորները:

Ասոնցմէ երկուքը, ինչպէս լուր կը տրուի մեզ, գրաւոր կերպով պատասխա- նած են թէ իրենց պաշտօնը աւարտած կը նկատեն այլ եւս, քանի որ ժողովը հան- րագրին օրինակութիւնը կասկածի տակ ձգել ուզած է պաշտօնական յայտարարու- թեամբ մը, ինչ ինչ առարկութիւններ ընե- լով և մանաւանդ յայտարարելով թէ, հան- րագիրը բաւական թուով տեղացի Հայոց (անուններն առաջնորդարանի տուճարին մէջ արձանագրուած) ստորագրութիւններ չէր պարունակէր եւն:

Իսկ միւս երկուքը, որ զղջալով առջի օրէն իսկ իրենց ստորագրութիւնը ետ ա- ռած էին, զարմանալի է որ իր պատգա- մաւոր ներկայացեր են ժողովոյն:

Տեղական Մուգաքրաւ արար թերթին երէկուան թուոյն մէջ կիրակի օրուան մի- ջագէտը պատմուած է և այս առթիւ թէ տեղւոյս հայ գաղթականաց և թէ ազգային օրէնքներու մասին գրուած է խեղճութիւ- եալ կերպիւ, անշուշտ Առաջնորդարանի կողմէ տրուած սխալ տեղեկութեանց հա- մեմատ:

Յաջորդ թուով սոյն հետաքրքրական յօդուածին թարգմանութիւնը պիտի գնենք մեր թերթին մէջ, որպէս զի թէ տեղացի և թէ արտասահմանի հայեր տեսնեն թէ տեղւոյս ազգ. պաշտօնական մարմինը ի՞նչ- պէս կ'ըմբռնէ դէպքերն և իրողութիւնները:

Սեպտ. 14 թուականով Պօլսէն կը գրեն:

Հայոց Պատրիարքը Սուլթանին մատու- ցած է Հայ ազգին արգի անհանդուրժելի կայունութեան վրայ յիշատակագիր մը, որով բարեփոխումներ ձեռք բերելու մասին թա- խանձած է:

Պատրիարքը բերանացի աւելցուցեր է թէ՛ իւր ժողովրդեան առջև վարկաբեկ ե- ղած է, և թէ՛ որ Սուլթանը մերժէ խնդ- րուածները շնորհել, ինքը և ազգային ժո- ղովը, որոշած են վերջնականապէս հրա- ժարիլ:

Մ. Ս.—Ահաւասիկ գիւտնագրական խոշոր սուտերէն հատ մ'ալ, որ ի ՀԱՆԴԱՐՏՈՒԹԻՒՆ ԳԱՆԹԱԿՆԵԱԼ ՄՏԱՅ կը գորուի հայ ազգին առ- ջեւ: Պատրիարք եւ վարչութիւն նոր կ'իմանան թէ հայ ազգին վիճակը անհանգուրժելի է: Երա- նի՛ իրենց որ այդչափ սրատես են եղեր . . .

Տեղական թերթի մը Պօլսոյ թղթակիցը Հա- յոց մասին հետեւեալ տեղեկութիւնները տուած է: «Հոս Հայոց մասին կեղեքումները երթա- լով աւելի շատցած են: Օտար երկրէ վե- րագարձողները, մինչև իսկ դաւաճներէն Պօլիս եկողները կը ձերբակալուին, հարցա- քննութեան կ'ենթարկուին և յաճախ կը բանտարկուին:

Հաւաստի կերպով ինձ պատմեցին տեղ- ւոյս խիստ ծանօթ երեւելի մէկու մը մի- ջագէտը: Ասիկայ 73 տարեկան ծերունի կալուածատէր մ'է, որուն ընտանիքը հոս կը գտնուի: Եգիպտոսէն վերադառնալուն երեք օր բանտարկուած է առանց պատ- ճառը բացատրուելու:

Միւս կողմէն Հայոց Պատրիարքը շա- րունակ սպառնական նամակներ կ'ստանայ իւր հասարակութեան կողմանէ՝ ազգին շա- հերը պէտք եղած կերպով չպաշտպանելուն համար:

Իրողութիւնը սա է թէ Պատրիարքին դիրքը հետզհետէ անհանդուրժելի կը դառ- նայ և հաւանական է թէ հրաժարելու հար- կադրուի. վասն զի պալատը ըրած բոլոր իր դիմումները և պահանջումները ապար- գիւն կը մնան»:

Յուսք սրտի կը տեղեկանանք թէ Փա- րուսի ծանօթ Տնօրէն-Խմբագիր Յարութիւն Էֆենտի Ալփիարի մայրը Ալն. Տիկին ՅՈՒՍ- ՏԻԱՆԷ Ծ. ԱԼՓԻԱՐ յետ երկարատե հի- ւանդութեան ամսոյս 19ին ի Տէր հանդած է Ալեքսանդրիոյ մէջ, ուր փոխադրուած էր հիւանդութիւնը դարմանել տալու համար:

Խմբագրութիւնս իւր բոլոր աշխատա- կիցներուն հետ, կը փութայ խորին ցաւակ- ցութիւնը յայտնել համակրելի հրապարա- կագրին սոյն դառնաղետ կորուստին հա- մար և երկնային մխիթարութիւնը կը հայ- ցէ հանգուցեալին զաւակացը և համայն պարագայից:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Չարն եւ Ռեկեմի վճիռը.—Պէտք թօրփի մէջ է (ի Տանիմարքա) որ Ռուսոյ կայսրը Տրէյֆիւտի դատապարտութեան լուրը ա- ռած է:

Սէնտի պատերազմական ասեանին վը- ճիւր ժամը հինգ ու կէսին հեռաձայնով

իմաց տրուած է արքայական գղեակը: Քը- րիսթիան թագաւորը ինքն հաղորդեր է լուրը բարձր ներկաներուն:

Ի լուր դատարանին այդ որոշման, պահ մը խոր լուռութիւն կը տիրէ և ամենուն աչ- քերը կը դառնայ դէպ ի նիքոյա կայսրը: Նա ցած ձայնով կը մրմնջէ «Թշուա՞ւ եր- կիր», և իսկոյն կ'առանձնանայ իւր սեն- եակը:

—Շապրօլ փողոցի տան մէջ ամբացած հակասեմական Պ. Կէռէն հինգ շաբաթ իւր 11 ընկերներովը պաշարուած մնալէ վերջը՝ ամսոյս 20ի առաւօտուն դուրս ելած և ա- ռանց ընդդիմութեան անձնատուր եղած է ոստիկանութեան: Բանտարկուած կը գտնուի այժմ և քիչ օրէն արդարութեան բարձ- րագոյն ասեանին պիտի յանձնուի:

Իւր ընկերները ազատ թողուած են:

—Սե Լեւան Նիքիթա իշխանը՝ Պօլսէն մեկնելէ առաջ տեսակցութիւն մ'ունեցած է Ֆիկարօիմէի թղթակցին հետ: Իրեն այս ճամբորդութեանը նպատակը հարցուելով՝ իշխանը հետեւեալ բացատրութիւնը տուեր է:

«Այս փոքրիկ ճամբորդութեան նշա- նակութիւնը շատ մեծցուցին: Պարզ քաղա- քավարական այցելութիւն մ'է զոր փափա- քեցայ ընել Ն. Կ. Վեհափառութեան:

Թրքաց և Գարառազցիներուն միջեւ յարաբերութիւնները երբէք ա՛յսքան սի- րայիր չեն եղած: Իմ մասին երջանիկ կը համարիմ ինքզինքս որ այդ յարաբերու- թիւնները աւելի սերտ, աւելի մտերմական և անվիճելի ըրի Պօլիս գալովս: Ահա ա- մէնը այս է:

Այս երկրորդ անգամն է որ սոյն ճամ- բորդութիւնը ընելու հաճոյքը կ'ունենամ: Ինչպէս 16 տարի առաջ, այսօր ալ սա հա- լաստիքն ու համոզումը ինձ հետ կը տա- նիմ թէ Ն. Վ. Սուլթան Համիտ իմ խա- ղազասէր զգայմանցս մասնակից է»:

Թղթակիցը հարցունելով թէ ո՛ր աս- տիճան ստոյգ են Ալպանիոյ սահմանադրուի- ներուն վրայ պատահած միջագոյնները, ո- րոնց մասին թերթերը ամէն վայրկեան կը գրեն, իշխանը պատասխանած է.

«Յաճախ կարգացուած վրդովիչ լու- րերուն որ աստիճան ճիշտ ըլլալը իմանալ կ'ուզէք: Բայց ստոյգ ոչինչ չկայ, բացար- ձակապէս ոչինչ: Վստահ եղիք թէ օրինա- կի համար, ամէն օր դերմանական փոքր երկիրներուն մէջ շատ աւելի մանր մունր կռիւներ տեղի կ'ունենան, քան թէ Թուր- քիոյ և դրացի երկիրներու միջև: Բայց Պա- վէրիաի և կամ Մաքսուիոյ սահմանադրուի- ներուն վրայ ո՞վ կը խօսի»:

Պալքաններէն աւելի արձագանք տը- ւող դրդիչ երկիր չկայ, հրացանէ արձակ- ուած թերթե բոմբիւն մը հոն աւելի աղ- մուկ կը հանէ, քան թէ այլուր հարիւր թնթանօթի հարուածներ:

Սեր սահմանադրութիւններուն վրայ ոչ- խարի մը համար երկու հովիւներու միջև պատահած կռիւն իսկ եւրոպական մասու- լին մէջ արձագանք կը գտնէ: Իսկապէս թուրքերուն և վարատաղցիներուն միջև բարեկամութիւն միայն կը տիրէ: Բոլոր ըն- թացիկ խնդիրները կարգադրուած են միշտ բարեկամ մնալու փոխադարձ փափաքով մը»:

Եւ իշխանը խօսակցութիւնը վերջացու- ցած է սա բառերով. «Կը տեսնէ՞ք, երբ մարդ պատերազմ կը մղէ, պէտք է լու պա- տերազմի, բայց երբ խաղաղութիւնը վե- րահաստատուած է, պարտի ուղղամու- թեամբ խաղաղասէր ըլլալ»:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է
Մ ՈՒ Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց

Գ. Է. ՄԵԼՎԱՃԵԱՆ

Գ Ա Ն Ի Ր Է
Մ ՈՒ Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց

